

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ՍԵՄԻՏԱԿԱՆ ԲԱՌԵՐ ՀԻՆ ՀԱՅԵՐԷՆՈՒՄ.

(Բանասիրական)

Հայ լեզուն. այդ՝ Առաջաւոր Ասիայի բախտախնդիր վիճակի հարազատ արտացոլումը, դարերի ընթացքում ենթարկուելով այլ և այլ իրար հետ ոչ մի կապ չունեցող լեզուների ուժեղ ազդեցութեանը, դանդաղութեամբ իւրացրել է իր մէջ այդ եկամուտ հոսանքների մնացորդները և հասել մեզ այն խայտաբղէկ կացութեամբ, որ մենք տեսնում ենք ներկայումս: Լինելով ինքը անդամ Հնդ-Եւրոպական լեզուների բազմաճիւղ ընտանիքի¹⁾, այդ բարբառը կարողացել է շատ և շատ օտար յատկութիւններ ընդունելով, այժմ, իր բարդութեամբ իբր դժուարին հանելուկ, զբաղեցնել լեզուագիտական աշխարհը: Սեռերի բացակայութեամբ, ստուգարանական որոշ նմանութեամբ մօտենալով Իրանական ճիւղին (կենտրոն-Պարսկերէն), նա բայերի ժամանակների բազմազանութեամբ, հոլովման որոշ առանձնայատկութեամբ և այլ գծերով տարրերուելով նրանից, հայ լեզուն դրանով լայն ասպարէզ է բաց արել տարրեր ենթադրութեանց:

* *

Օտար լեզուների ազդեցութեան ցայտուն պատկերացումը երևում է նախ և առաջ այն բազմաթիւ փոխ առնուած բառերի մէջ, որոնց խտրութիւնը ընդհանուր առմամբ ծածկում է հարազատ—բուն հայկական բառերի գոյութիւնը: Պարզ է, ի հարկէ, որ առաջին և կարեւոր տեղը, իբրեւ աղբիւր մեր փոխ առած բառերի, հանդիսանում է պարսկերէնը. երկար դարերի միատեղ անցուցած կեանքը, որի սկիզբը միանում է իրենց այդ երկու ազգերի առաջացման շրջանին, պարզում է մեր առջև այդ լեզուական ուժգին ազդեցութեան պատճառները:

Կարիք չկայ այս փոքրիկ թուուցիկ յօդուածում յառաջ բերել Հիւրշմանեան հռչակաւոր գտումը մեր հարազատ բառերի, ոչ

1) Ընդունում եմ Բերլինի հայագէտ Պետերմանի եւ յետագայ գիտնականների կարծիքը՝ հիմնուած մի շարք լուրջ փաստերի վրայ:

մասնագէտ ընթերցողը կարող է առանց դժուարութեան դիտել պարսկական կուռ տիրապետութիւնը մեր լեզուական աշխարհում, հիմնուելով այն անթիւ անհամար բառերի վրայ, որոնցով արտայայտում է ներկայումս մեր ժողովուրդը իր մտածումները կեանքի բոլոր ճիւղերի վերաբերեալ. կուռական դրութեամբ թէ թուրքացած ձևով բառերի երկար շարքեր պէճնում են մեր բոլոր գաւառաբարբառների բառգրքերը:

Այժմ ինձ հետաքրքրում է բոլորովին այլ ազդեցութիւն, որ իր պատմական գոյնով ստիպում է մեզ տարուել տարրեր ենթադրութեամբ: Սօսքս սեմիտական լեզուների (գլխաւորապէս արաբերէնի) մասին է, որոնց բառերի մի պատկառելի մաս հարազատութեամբ կամ կերպարանափոխուած տեղ է գտել մեր հին լեզուում: Դոցանից մի որոշ խումբ (աղաւաղուած թէ իսկութեամբ) վերաբերւում են այն դարերին, երբ կրօնի գաղափարով երկրագնդիս տարրեր անկիւնները լցուեցին Արաբիայի անյայտ բեղուն (թափառական) ժողովրդներով. այդ տեսակէտից էլ դա մեզ չի զբաղեցնում, գտնելով հէնց այդ երևոյթի (քաղաքական տիրապետութեան մէջ) իր մեկնութիւնը հետաքրքրում են ինձ այն բառերը, որոնք դործ են ածւում մեր դասական (V դար) գրական լեզուում, ուստի և նոցա բացատրութիւնը արաբական արշաւանքների մէջ փնտռելն աննպատակայարմար և անհնար կլինէր:

Ահա այդ բառերից քանի մի հատ:

ա) Հայերէն հարս (բարդ ձևը—հարսանիք) բառին համապատասխանում է արաբական عروس-արուս (յոգնակի-արայիս) նոյն նշանակութեամբ (պարսկակ. փոխառութիւնը-հարուս). «հ» հնչիւնն ըստ երևոյթին եկամուտ-յաւելեալ է (համեմատել-ալևոր = հալևոր), քանի որ արաբերէնում «ա» հնչիւնը (արուս բառում) արմատական չէ. փոփոխուած ձևերում ստացւում է «ա»-ի փոխարէն «ու» (عرس¹)—ուրս=հարսանիք), «ի» (عرس-իւրս=ամուսին): Ուրեմն սկզբնական ձևը եղել է «արս» (առանց «հ»ի), ուր սղուած է «ու» հնչիւնը:

բ) Հետաքրքիր է և հայերէն «սև» բառը. արաբ. դրա իգական սեռի ձևը: سودا—սեդաու (արակ—اسود-առուադ). դուրս ձգելով բառի երկրորդ վանկը, կստացուի նոյն հայկական արմատը: Թէպէտ ընդունելի կարող է լինել և պարսկական ձևը—سیاه—սիահ (այստեղից են վերցրել օսմանցիք իրենց սիա-ձևը):

գ) سبت-սաբա (արմատ-սբա). հանգստութիւն, նինջ, շա-

1) Արաբերէնում. մայնաւոր հնչիւնների համար դրեր չկան. կան միայն յատուկ նշաններ (3 հատ), որոնք սակայն չեն գրւում (բացի— Կուրանից):

բաթ. առաջացած է սարատա բայից (հանդստանալ): Գործ է ած-
ւում մի շարք հնդ-ևւրոպական լեզուներում, որպիսի պատճառով և
ծնեցնում է որոշ հետաքրքրութիւն. ուսեբէն—суббота, պարսկ-
شنبه-շաբէ ֆրանս-samedi:

դ) ديوں-դիուան-դիվան: Հիմնարկութիւն, գրասենեակ, վար-
չութիւն, խորհուրդ: Նոյն այդ նշանակութեամբ էլ գործ է ածւում
հայերէնում, յաճախ աւելացնելով բարդութեան մասը (... տուն):
Թէպէտ հաւանական է այս բառի անմիջապէս պարսիկների մի-
ջոցաւ հայոց լեզուի մէջ մուտք գործելը:

ե) دهليز-դիհլիզ=նախասենեակ, ընդունարան, գաւիթ (պարս.-
դէահլիզ). փոխարկուել է հայերէնում «դահլիճ»ի, համարեա նոյն
նշանակութ. (աւելի հաւանական է ընդունել յոգնակի ձևը—دهاليز
դահալիզ):

զ) قديل-կանդիլ=լապտեր, կանթեղ. հայերէն ձևը ստացել է
համաձայն ընդհանուր օրէնքի-«լ»-ն փոխելով «դ»-ի (հմմտ. Пауло
=Պօղոս, Ալէքսանդր=Աղէքս...)¹⁾

է) Գուցէ հնարաւոր լինի կապել հայերէն «դաս» բառը ա-
րաբերէն درس-դարս-ի հետ. (փոխ է առնուած և պարսկերէնում
ու թուրքերէնում). ինչպէս և «մահ»-ը موت-մա'տ-ի հետ («տ»-ի
փոխարկուելը հայերէնում «հ» հնչիւնի նկատուում է մի քանի բա-
ռերում):

ը) حلال-սիլահ=զէնք, զրահ: Այս երկու բառերի նոյնութիւ-
նը բացատրւում է նախ նոյն օրէնքով (լ=դ), մանաւանդ որ Հա-
յաստանի հարաւային նահանգներում գործ են ածում «սիլահ»
ձևը²⁾: Սակայն հայերէն «զրահ» բառի «զէնք» զաղափարից որոշ
տարբերութիւն և յատուկ նշանակութիւն ունենալը (=пандырь)
հարկադրում է ինձ կապել այդ բառը արաբական մի այլ բառի
حلال-դար'-ի հետ, որ նշանակում է սյփ, կորով³⁾:

թ) لسان-լիսան=լեզու (ЯЗЫКЪ):⁴⁾

ժ) ثمر-սեմեր'=պտուղ, սերմ: Արտաքին տարբերութիւնը
«սեմեր» և «սերմ» բառերի տարօրինակ չի թուայ, եթէ ի նկատի
առնենք, որ հայերէնում սակաւ չեն տառերի տեղափոխութիւնը—

1) Ըստ պրօֆ. Ա. Արիմսկու պիտի փնտռել այստեղ յունական
καυδολον—կանդիլոն բառը:

2) Նոյնպէս եւ—«իւանգուն» —ժողովրդական «զառ» —երկարութեան
չափ:

3) Ըստ Արիմսկու ուզիղն է հնդ-ևւրոպ. արմատը. սլաւոներէն—
лизати, յունարէն λευξε-լէխս:

4) Տես Հայկունու հայ ժողովրդական վէպի ժողովածուն «Էմինեան
ֆոնդի» հրատարակութեամբ:

սեմեր-սերեմ-սերմ: Սակայն յայտնի լեզուագէտ Ա. Կրիմսկի նպատակայարմար է համարում կապել այդ բառը հնդ երոսական (լատին.) semen, semer-ի հետ:

ի) دلو-դալվ=դոյլ հնարաւոր է զուգորդել այս բառը սլաւոնական ДОЛЫВ-ի հետ:

լ) امين-ամին=ուղիղ, ճշմարիտ, անկեղծ, թէպէտ բառը արաբական է, (սիմիտական) սակայն շնորհիւ ս. Գրքի տարածուել է ողջ քրիստոնեայ աշխարհում:

Աւելի նոր ժամանակներում գործածուող բառերից կարելի է յիշատակել՝

կ) سوق-սուկ (հիմքը արամէական)=շուկա:

ծ) حكايت-հիկայէ(թ) (պարսկ. հէկայէ)=պատմուածք, հեքիաթ. բայանուն է حكي «հակա» բայից, որ նշանակում է—պատմել:

դ) سفرجل-ասֆարջալ=սերկէիլ:

Կարելի է յիշատակել և օրինակների երկար շարք, սակայն դա կարող է կազմել ապագայում մասնագիտական առանձին աշխատանք:

Վերջին ժամանակներս ակադեմիկ Ն. Մարր փորձում էր հայ լեզուն մօտեցնել Կովկասեան ցեղերի լեզուախմբին: Արդ, եթէ լուրջ ուսումնասիրուի սեմիտական տարրը մեր լեզւում (թէև շարահիւսութիւնը—ստուգաբանութիւնը չունի ոչ մի կապ կամ շատ քիչ), կղղիացուի բառերի և ձևերի այն շարքը, որը առանց որ և է միջնորդի օժանդակութեան, առանց փոխառնութեան լինելով, կհարկադրի մեզ փնտռել մեր և սեմիտական լեզուների մէջ որ և է ներքին հաստատուն կապ, այն ատեն գուցէ համեմատական լեզուագիտութիւնը այլ հիմքեր գտնի իր աշխատանքների համար հայ լեզուի վերաբերեալ:

Էսգեթ.

Փանծակ:

